



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԵՄՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Երևան, Կառավարական փուն 1

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N° 01/12**

(«Արմտեքս» ՍՊ ընկերության 08.11.2017թ.-ի վարչական բողոքը մերժելու մասին)

**Ք. ԵՐԵՎԱՆ**

**«22» դեկտեմբերի 2017թ.**

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ նախագահությամբ ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի, ուսումնասիրելով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 2017թ. սեպտեմբերի 12-ի թիվ 51/2 որոշման վերաբերյալ «Արմտեքս Գրուպ» ՍՊ ընկերության 08.11.2017թ.-ի վարչական բողոքը՝

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.**

«Արմտեքս Գրուպ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև՝ Ընկերություն կամ Բողոք բերած անձ)՝ ի դեմս Ընկերության լիազորված անձ Մարիանա Սարգսյանի, բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Գանգատարկման հանձնաժողով) 12.09.2017թ.-ի թիվ 51/2 որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) վերաբերյալ:

Բողոքը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարություն 08.11.2017թ.-ին:

Բողոք բերած անձը հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հետքացթողումային հսկողության վարչության աշխատակիցները, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 12.06.2017թ. թիվ 0015 հանձնարարականի համաձայն, 2017 թվականի հունիսի 14-ից Ընկերությունում իրականացրել են արտապլանային արտագնա մաքսային ստուգում: Ստուգման

համար հիմք են հանդիսացել կասկածները, որ Ընկերության կողմից ներմուծված ապրանքները հայտարարագրվել են հաշիվ-ապրանքագրային ու մաքսային արժեքների վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկություններով: Ստուգման արդյունքում 12.07.2017թ. կազմվել է թիվ 0015-Ա ակտը (այսուհետ՝ նաև Ակտ), որով Ընկերությանն առաջադրվել են լրացուցիչ վճարման ենթակա մաքսային վճարներ, մասնավորապես 591.173 դրամ մաքսատուրքի գծով և 40.299.587 դրամ ավելացված արժեքի գծով, ինչպես նաև հաշվարկվել են 0,15% չափով օրական տույժեր 18.722.557 դրամի չափով, այսինքն՝ առաջադրված ընդհանուր գումարը կազմել է 59.613.350 դրամ:

Ակտի դեմ 25.07.2017թ. ներկայացվել է վարչական բողոք, որը քննության է առնվել Գանգատարկման հանձնաժողովի կողմից:

Գանգատարկման հանձնաժողովի կողմից 12.09.2017թ. կայացվել է վարչական վարույթը կասեցնելու մասին թիվ 51/2 որոշումը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի «ա» կետով նախատեսված հիմքով, այն է՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը:

Վերոգրյալի կապակցությամբ Բողոք բերած անձը պնդում է, որ վարչական մարմնի կողմից կայացված վարչական վարույթը կասեցնելու մասին որոշումն անհիմն է, ենթակա է վերացման և ոչ իրավաչափ ճանաչման, քանի որ ըստ էության այդ որոշմամբ վարչական մարմինը դրսևորել է անգործություն՝ օրենքով սահմանված կարգով չընդունելով համապատասխան վարչական ակտ, ուստի Բողոք բերած անձը խնդրում է պարտավորեցնել Գանգատարկման հանձնաժողովին շարունակել վարչական վարույթի իրականացումն ու ընդունել համապատասխան վարչական ակտ:

Որպես բողոքի իրավական հիմքեր Բողոք բերած անձը խնդրել է կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 37-րդ հոդվածները, 38-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև 69-րդ հոդվածը և 76-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անձի պնդմամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ հետքացթողումային հսկողության

վարչության աշխատակիցների կողմից 12.07.2017թ. կազմված Ակտը գրավոր վարչական ակտ է, որի կայացման նպատակով վարչական մարմինն իրականացրել է վարչարարություն և որն Ակտն ընդունող մարմնի համոզմամբ ու տրամաբանությամբ եղել է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ, ձեռք է բերել անհրաժեշտ «ապացույցներ», որոնք բավարար է համարել վարչական ակտն ընդունելու համար, այսինքն վարչարարությունն իրականացվել է իր բոլոր երեք փուլերով՝ հարուցման, ընթացիկ ու եզրափակիչ:

Հետևաբար, ըստ Բողոք բերած անձի, գործ ունենք ավարտված վարչարարության հետ, որի վերաբերյալ ներկայացվել է վարչական բողոք, իսկ նշված բողոքի կապակցությամբ իրականացվող վարչարարությունն անհասկանալի պատճառներով կասեցվում է դրա իրականացումը կապելով հարուցված քրեական գործի հետ, որպիսի պարագայում հարց է առաջանում՝ ինչ կապ ունի ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական գործի նախաքննությունը բողոքի կապակցությամբ իրականացվող վարչարարության հետ, մի՞թե քրեական գործով նոր ապացույցներ պետք է ձեռք բերվեն, որոնք կընկնեն վարչական վարույթի հիմքում, չէ՞ որ նախաքննությամբ հետապնդվում են բացառապես այլ՝ քրեադատավարական, ոչ թե արդեն իսկ ավարտված վարչական վարույթի համար նոր ապացույցներ ձեռք բերելու նպատակներ:

Ըստ Բողոք բերած անձի, քրեական գործով ենթակա են պարզման Ընկերության կողմից հարկերը և տուրքերը չարամտորեն խուսափելու վերաբերյալ հանգամանքներ, իսկ բողոքը վերաբերում է արդեն իսկ իրականացված վարչարարությանը, որի վրա չեն կարող ազդել քրեական գործի նախաքննության հետևանքները, քանի որ այդ երկու տարբեր իրավահարաբերությունները գտնվում են իրավական տարբեր հարթությունների վրա և չեն կարող քրեական գործով ձեռք բերված տվյալներն օգտագործվել որպես ապացույց արդեն իսկ ավարտված վարչական վարույթի համար:

Բացի այդ, Բողոք բերած անձը պնդում է, որ մաքսային ստուգման ակտերով առաջադրված մաքսային վճարների ու տույժերի բռնագանձման պրակտիկայի ուսումնասիրությունից հետևում է, որ քրեական գործի հարուցված լինելու փաստն ինքնին մաքսային մարմնի համար երբեք խոչընդոտ չի հանդիսացել գումարների բռնագանձման հայցերով դատարան դիմելու համար, այսինքն՝ վարչական ակտի կատարումը երբեք չի կասեցվել, իսկ մի շարք դեպքերում դատական պրակտիկայից

պարզ է դառնում, որ քրեական գործի առկայությամբ երբեք չի պայմանավորվել բողոքների քննության կասեցումը, սակայն Ընկերության դեպքում ինչ-ինչ պատճառներով քրեական գործի առկայությունը կապվել է բողոքի քննության հետ և դարձել կասեցման հիմք: Բողոք բերած անձի կողմից ներկայացվել են հետևյալ դեպքերը՝

1) «Ռետինե Նորույթ» ՍՊ ընկերության դեմ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ վարչական դատարան է ներկայացվել 7.860.305 ՀՀ դամ գումարի բռնագանձման հայց (թիվ ՎԴ/6634/05/15 վարչական գործ), դիմողը հետագայում հրաժարվել է հայցադիմումից, սակայն դա էական չէ, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարության համար խոչընդոտ չի հանդիսացել նույն փաստով հարուցված քրեական գործի առկայությունը, իսկ նման պարագայում քրեական գործի հարուցումը պարտադիր է եղել, քանի որ 2015 թվականի դրությամբ մաքսանենգությունը հանդիսացել է քրեորեն պատժելի արարք, իսկ 205-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշների առկայության համար բավարար էր միայն այն, որ չվճարված հարկերի ու մաքսային վճարների գումարի չափը գերազանցեր 2.000.000 ՀՀ դրամը:

2) Հետբացթողումային հսկողության արդյունքում կազմված ակտով «Գլոբալ Մոթորս» ՍՊԸ-ին վճարման համար առաջադրվել է ավելի քանի 300.000.000 ՀՀ դրամ, ինչից հետո հետբացթողումային հսկողության ակտը բողոքարկվել է վարչական դատարան (թիվ ՎԴ/1801/05/14 վարչական գործ), քննվել է ՀՀ վարչական և վերաքննիչ դատարաններում, հոգուտ բողոքաբերի կայացվել է դատական ակտ, իսկ ՀՀ Վճարեկ դատարանը մերժել է ՀՀ ֆինանսների նախարարության բողոքը, այսինքն ինչպես ՀՀ ֆինանսների նախարարությունը, այնպես էլ դատական բոլոր ատյանները, տեղեկացված լինելով, որ նույն փաստով հարուցվել է քրեական գործ և իրականացվում է նախաքննություն, դա չեն համարել հիմք բողոքարկման վարույթը կասեցնելու համար:

Արդյունքում Բողոք բերած անձը պնդում է, որ ներկայացվածը ոչ միատեսակ վարչարարության փաստ է:

Բացի այդ, ըստ Բողոք բերած անձի, վարչական գործի ելքը քրեական գործի հետ կապելու դեպքում ստացվում է, որ վարչական բողոքի բավարարման արդյունքում քրեական գործի հարուցումն անհիմն է, որպիսի մտավախությամբ էլ պայմանավորված է կասեցման գործընթացը:

Վերոգրյալի հիման վրա Բողոք բերած անձը խնդրում է ոչ իրավաչափ ճանաչել Գանգատարկման հանձնաժողովի 12.09.2017թ. թիվ 51/2 որոշումը և դրա միջոցով վարչական մարմնի կողմից դրսևորված անգործությունը՝ պարտավորեցնելով վարչական մարմնին վերսկսել 25.07.2017թ. Ընկերության կողմից ներկայացված բողոքի հիման վրա իրականացվող վարչարարությունը և ընդունել համապատասխան վարչական ակտ:

## **2. Մասնակցի դիրքորոշումը.**

Բողոք բերած անձի դիրքորոշումը հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2017թ.-ի դեկտեմբերի 22-ին անցկացրել է լսումներ, որին հրավիրվել է Բողոք բերած անձը:

Բողոք բերած անձը պատշաճ ծանուցվել է լսումների վերաբերյալ, սակայն չի ներկայացել:

## **3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Բողոք բերած անձի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերից հետևում են հետևյալ փաստական հանգամանքները.

3.1. ՀՀ ԿԱ ՊԵԿ հետբացթողումային հսկողության վարչության կողմից 12.07.2017թ. կայացվել է արտագնա մաքսային ստուգման թիվ 0015-Ա ակտը, որով Ընկերությանը վճարման է ներկայացվել ընդհանուր 59.613.350 ՀՀ դրամ գումար, որից՝ մաքսատուրքի գծով՝ 591.173 ՀՀ դրամ, տույժեր՝ 289.422 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 880.595, ԱԱՀ-ի գծով՝ 40.299.587 ՀՀ դրամ տույժեր՝ 18.433.117 ՀՀ դրամ, ընդամենը՝ 58.732.704 ՀՀ դրամ, բնապահպանական վճարի գծով՝ 33 ՀՀ դրամ, տույժ՝ 18 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 51 ՀՀ դրամ:

3.2. Ակտի դեմ Ընկերության կողմից 25.07.2017թ. գանգատ է հասցեագրվել Գանգատարկման հանձնաժողովին, որով Ընկերության ներկայացուցիչը խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ հետբացթողումային հսկողության վարչության կողմից 12.07.2017թ. կազմված թիվ 0015-Ա ակտը, ինչպես նաև դրանից բխող ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին 12.07.2017թ. կայացված թիվ 0015-Ո-1-ից 14 որոշումները:

3.3. Գանգատարկման հանձնաժողովի կողմից սույն թվականի սեպտեմբերի 12-ին կայացվել է թիվ 51/2 որոշումը, համաձայն որի՝ հաշվի առնելով, որ ՀՀ

քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել և քննվում է թիվ 83167717 քրեական գործը, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը, վարչական վարույթը կասեցվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով:

#### **4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.**

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ **բողոքն անհիմն է և ենթակա է մերժման՝** հետևյալ հիմնավորմամբ.

Սույն բողոքի քննության համար Հանձնաժողովն էական է համարում հետևյալ հարցադրումներին անդրադառնալը՝

- փոխկապակցված են արդյոք բողոքարկված վարչական գործը և դրա բողոքարկման ժամանակահատվածում հարուցված քրեական գործը.

- քրեական գործի քննության արդյունքները կարո՞ղ են արդյոք նպաստել Գանգատարկման հանձնաժողովի կողմից վարչական վարույթի օբյեկտիվության, բազմակողմանիության և լրիվության ապահովմանը:

Հանձնաժողովը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովի կողմից վարչական վարույթի կասեցումն իրավաչափ է՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը:

Սույն գործի շրջանակներում Բողոք բերած անձի կողմից որևէ կերպ չի առարկվում այն փաստը, որ համապատասխան քրեական գործը հարուցվել է Ստուգման ակտով արձանագրված գործողությունների առնչությամբ, որից անմիջականորեն հետևում է նշված երկու գործերի փոխադարձ կապը:

Անդրադառնալով Բողոք բերած անձի հիմնական դիրքորոշմանը, համաձայն որի՝ քրեական գործով չեն կարող ձեռք բերվել նոր ապացույցներ՝ կապված արդեն իսկ իրականացված վարչարարության հետ, Հանձնաժողովը գտնում է անհիմն,

քանի որ խոսքը վերաբերում է ոչ թե նոր ապացույցներ ձեռք բերելուն, այլ վարչական մարմնի՝ սույն դեպքում Գանգատարկման հանձնաժողովի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներն ապահովելուն, համաձայն որի՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, **այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները**:

Հարկ է նշել, որ Գանգատարկման հանձնաժողովին ուղղված բողոքում Բողոք բերած անձն անդրադարձել է Վրաստանից ՀՀ մաքսային մարմիններին տրամադրված տեղեկատվության ոչ պատշաճ լինելուն և այլն, որպիսի հանգամանքների պարզումը քրեական գործի շրջանակներում անմիջականորեն կարող է նպաստել Գանգատարկման հանձնաժողովի կողմից բողոքի քննության լրիվությունը, բազմակողմանիությունը և օբյեկտիվությունն ապահովելուն, որպիսի հանգամանքն ուղղակիորեն բխում է նաև Բողոք բերած անձի շահերից:

Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի, 1-ին մասի «բ» կետի պահանջներով՝

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Արմտեքս Գրուպ» ՍՊ ընկերության 08.11.2017թ.-ի վարչական բողոքը մերժել. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 2017թ. սեպտեմբերի 12-ի թիվ 51/2 որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ